



123. ԼԵՅԼՈՅԻ ՆԱՂԼԸ

Ըլում ա, շի ըլում մի հատ թաքավոր: էտ թաքավորին ըլում ա իրեք տղա, իրեք ախշիկ: Իրեք ախշիկը հասած են ըլում, թաքավորը ուզում ա մարդի տա. օրերից մի օր Գելը գալիս ա խնամաքարի վրա նստում ա: Թաքավորի նազիր-վազիրը տեսնում են, որ խնամաքարին Գել ա նստե, գալիս ասըմ են թաքավորին.— Թաքավոր, բա շես ասիլ խնամաքարին Գել ա նստե:

էս ասըմ ա.— Կանչեք գա:

Կանչըմ են, գալիս ա Գելը, գլուխ ա տալիս թաքավորին՝ կայնըմ ա:

Ասըմ ա.— Ինչ ես ուզըմ:

Ասըմ ա.— Ուզում եմ քո մենձ ախշիկդ առնեմ:

էն դէիցը մենձ ախպերն ու միջնակ ախպերը գալիս են, ասըմ են.— Մենք մեր քիրը շենք տա քեզ:

Իսկ թաքավորն ու պուճուր ախպերը ասըմ են.— Մեր ախշկա մուշտարին առաջի անգամ Գել ա էկե, պետք ա տանք:

Տալիս են Գելին, հարսանիքը բռնում են, Գելը վերցնում ա էթում:

Մնում ա հեքսի տարին, Արջը գալիս ա նստում խնամաքարին:

Վազիրը դուրս ա գալիս, տեսնում ա Արջը նստած ա խնամաքարին: Գալիս ասըմ ա.— Թաքավորն ապրած կենա, էսօր էլ Արջն ա նստե խնամաքարին:

Ասըմ ա.— Որ նստել ա, կանչեք գա:

Արշը մանում ա նեքսե, գլուխ ա տալի թաքավորին, կաղնըմ:

Ասըմ ա.— Ի՞նչ ես ուզըմ:

Ասըմ ա.— Ուզըմ եմ միշնակ ախչիկգ առնեմ:

Մենձ ախպերն ու միշնակ ախպերը գալիս են, հակառակում են, չեն տալի: Պուճուր ախպերն ու հերը տալիս են: Հարսանիքը անում են, Արշը վերնում ա՝ էթըմ:

Գալիս ա էքսի տարին, էլ էն ժամանակը, Արծիվը նստում ա խնամաքարին: Պուճուր ախչիկն էլ տալիս են Արծիվին, վեր ա ունում էթըմ ա:

Մենձ ա միշնակ ախպերը պուճուր ախպոր հետ կռիվ են անըմ, թե ընչի մեր քըվորտինքը տվեցիր անասուններին:

Պուճուր ախպերը տենում ա, որ կռիվ են անում, վեր ա ունում մի հատ լավ ձի, մի խուրջին ոսկի, դուրս ա դալիս հոր երգրիցը, էթըմ ա մի ուրիշ թաքավորի հող:

էթըմ ա, տեսնում ա մի մեծ ամարաթ, տեսնում ա էտ ամարաթի ազաքին մի ախչիկ ա կաղնած, որ շուտես-չխմես, թամաշ անես նրան:

Ախչիկը տեսնըմ ա էտ տղին, ասըմ ա ինքն իրան. «Թե որ էս տղեն ինձ ուզի՝ կառնեմ: Ըստրա պես սիրուն տղա աշխարհումը չկա»:

Թաքավորը դուս ա գալիս, տենում ա էտ տղեն կաղնած ա, ասըմ ա ինքն իրան. «Թե էս լավ տղեն իմ ախչիկը ուզի՝ կը տամ»:

Իրեքի միտքն էլ իրար բռնում են: Տղեն ձիուցը վեր ա գալի, մտնում ա թաքավորի ամարաթը, մի առժամանակ ըտեղ ապրում ա: Թաքավորի ախչկա սիրտը մի բոցի պես կրակը ընգնում ա, վառում, թե երբ պտի էս տղեն ինձ առնի:

Մի օր էտ ախչիկ մի նամակ ա գրում, դնում ա ըստողի վրեն: Նամակը բաց ա անըմ, կարդում ա տղեն՝ տենում ա, որ ախչիկը գրել ա, թե արի՛ ինձ առ, ես քեզ կառնեմ:

Տղեն գալիս ա ախչկա մոտը. «Թե որ դու ինձ առնես, ես քեզ կառնեմ ու կառնեմ»:

Ըտոնք մի ժամանակ իրար հետ ապրում են թաքավորից թաքուն, խաբարը տալիս են թաքավորին: «Թաքավորը ապրած կենա,— ասում են,— էտ տղեն քու ախչկանը առել ա»:

Ասըմ ա.— Որ առել ա՝ կանչեք գա իմ կուշտը: Կանչըմ են, գալիս ա թաքավորի կուշտը: Թաքավորն ասում ա.— Դո՛ւզ ա, դուք իրար առնըմ ե՞ք:

Տղեն ու ախշիկը ասում են.— Առնում ենք:
Իւրում են օխտը օր, օխը քշեր հարսանիք են անում, ուտում
են, խմում են, քեֆ անում:

Թաքավորը մի լավ ամարաթ ա տալիս, ասում ա.— Գնացեք
ձեզ համար հանգիստ ապրեցեք:

Եթըմ են մի առ ժամանակ ապրում են, մեկ օր թաքավորի
տղեն ասում ա.— էս դռների բալանիքները տու մի բաց անեմ,
տենանք ի՞նչ կա էս ամարաթների մեջ:

Թաքավորի ախշիկն ասում ա.— Որ էս բալանիքները տամ՝
դու վնաս կը քաշես:

Ասում ա.— Տո՛ւր, վնաս չեմ քաշի:

Բանալիքները տալիս ա, ասում ա.— Ինչ բան կը տենաս, տե-
ղումը կը թողաս, ձեռ չես տա, որ ձեռ տաս՝ վնաս կը քաշես:

Բանալիքները առնում ա, էթում: Էթում դռները բաց ա անում,
մեկը-մեկի միջից էթում ա մի մեծ էրկաթե դռան թուշ ա ըլլում,
քաշը կըլի տասը խալվար: Տեսնում ա, որ էտ էրկաթի դռան ճխա-
նի տակը մի մարդ ա պտուկած: Ճխանը աչքի մեջն ա դրած: Հենց
որ էտ տղին տեսնում ա, ասում ա.— Թաքավորի տղա, ի սեր
ասսու ինձ էստեղից աղատի:

Թաքավորի տղան վերցնում ա ճխանը, աչքիցը հանում ա,
դնում ա անկաճը:

Ասում ա.— Օխա՛յ, թաքավորի տղա, աչքս մի քիչ հովացավ:

Թաքավորի տղեն դռները շինում ա, ետ ա դռնում գալիս ա:

Թաքավորի ախշիկը հարցնում ա.— Ի՞նչ տեսար տեսածդ
ժած տվիր, թե մնաց տեղումը:

Թաքավորի տղեն ասում ա.— Ոչ մի բան էլ ժած չեմ տվել,
իրա տեղումն ա:

Մնում ա, մի էրկու օր անց ա կենում, անցկացած ժամանակը
թաքավորի տղեն ախշիկանից բանալիքները առնում ա, դռները
բաց անելով էթում ա: Էթում ա տեսնում, որ էն մարդը ճխանի
տակն ա.— Ասում ա.— Թաքավորի տղա, ինձ ազատի, աշխարքի
տակը ինչ ուզես՝ կը տամ:

Թաքավորի տղան բացրացնում ա, էտ ճխանի տակի մարդը
դու ա գալի: Դու ա գալի մի հատ սիլլա տալի թաքավորի տղին:
Թաքավորի տղա՝ էսօր ես մեռեմ, թե էգուց: Հետո գալիս ա թաքա-
վորի ախշիկա մտը, շեքից մի հատ մազ ա հանում, կրակին ա տա-
լի՝ իրեք ոտնանի լեյլո ձին գալիս ա, թաքավորի ախշիկա մազերիցը
բռնում ա, քաշում ա ձիու թամբն ու վիշապի նման երկնքովը փախ-
ցընում ա:

Դա վերցնի էթա, մենք խաբարը տանք թաքավորի տղից:

Տեսնում են, որ ոնչ թաքավորի տղեն ա դուրս գալի ամարաթից, ոնչ թաքավորի ախշիկը, էթըմ են ամարաթը տեսնում են, որ ոչ թաքավորի տղա կա, ոչ թաքավորի ախշիկ: Մտնում են նես, դռնե-դուռ բաց անելով էթըմ են, տենում, որ թաքավորի տղեն էրկաթե դռան առաջ վեր ընկած ա: Տենում են, որ վեր ընկած ա, բերում են ջուր են ածում գլխին, պորտն էլ ոլորում, ուշքի են բերում: Վերակենում թաքավորի տղեն, ասում.—Օ՛ֆ, ես ինչդար քնել եմ ես:

Ասում են.— Տունդ չքանդվի, ի՞նչ ես քնե, մենք ըստեղ մի հատ մարդ ենք դրե, անումը՝ Ջհուդ-խախամ էր, դրան թաքավորը հարիր տարի տանշվեց, շարշարվեց, անճախ բռնեց դրեց էրկաթի գռան տակը, դու նրան հանել ես ըստեղից, թաքավորի ախշկանը վեր ա կալե՛ փախե:

Թաքավորի տղեն գալիս ա թաքավորի ամարաթը, ասում ա.— Սա պըտի էթամ իմ կնիկը բերեմ:

Թաքավորն ասում ա.— Գնաս՝ հետ շես գա, անտեղի ոչ գնա, ոչ էլ էն:

Թաքավորի տղեն չի լսում, վերցնում ա մի լավ ձի, մի խուրջին ոսկի, էթում ա: Շատ ա էթում, քիչ՝ հասնում ա մի դուռ կանանչ տեղ, տեսնում, որ էտ դըզումը մի մեծ մարթ կա, առաջանում ա, տեսնում, որ մի լավ ախշիկ էտ ամարաթի ա կուշկում կաղնած ա:

Ախշիկը հեռվից տեսնում ա, որ մի լավ տղա գալիս ա, սա անպատճառ իմ ախպերը կըլի, էս նրա երիշն ա: Գալիս ա հասնում ա ամարաթի դռանը, տեսնում ա, որ ախշիկը վեր էկավ, տեսավ իրա քիրն ա, փաթըթվեցին իրար, ախպերն ասեց.— էս Գիլու օջախն է:

Ախշիկը տարավ ախպորը լավ պատվեց, հարգեց, ասեց.— Հեսա մթնեց, Գելը կը դա քեզ կուտի, ես ո՞նց անեմ, բե քեզ պահեմ:

Տարավ դռան տակը, մի հատ քեշա ունեին, կոլուեց մեջը, պատի հետ տնկեց:

Մի քիչ մնաց Գելը էկավ, մրթմրթալով էկավ իրա հացը կերավ, ասեց.— Կնի՛կ, մարդու ֆոտ ա գալի:

Ասեց.— Հանդ ու շոլ դու ես ման գալի, ըստեղ մարդը ի՞նչ բան ունի:

էլի հացը կերավ, մի քիչ տազ արեց, ասեց.— Կնի՛կ, դուզն ասա, մարգի ֆոտ ա գալի:

Ասեց.— Ի՞նչ անենք, բալքի ախպերտանցիցս մինը էկել ա:
Ասեց.— Թե մենձ ախպերդ գա, մենձ թիքեն անկաճը կը թո-
ղամ, թե միջնակը՝ դա էլ ընենց, պուճուր ախպերդ գա՝ աչքիս վրա
տեղ ունի:

Ասեց.— Հա՛, պուճուր ախպերս ա էկե:

Ասեց.— Դե ասա գա, ուտենք, խմենք, քեֆ անենք:

Գնաց քեչի միջիցը հանեց ախպորը, բերեց, կերան, խման,
էտ քշերը քեֆ արեցին:

Առավոտը լիսը բացվեց, բացվի մեզ վրա և ձեզ վրա, թա-
քավորի տղեն ասեց.— Բա շե՛ս ասի, Գել փեսա, իմ կնիկը Զհուդ-
խախամը կելլո ձիով փախցրել ա:

Ասում ա.— Վա՛յ, քու տունը չքանդվի, էտ ի՞նչ բան ասեցիր:
էտ մարդը էլի մեյդան էկա՞վ. մենք վախում ենք, որ մեր կնա-
նիքն էլ տանի: Դու արի մի գնա, եթաս՝ հետ շես գա:

Թաքավորի տղեն անգաճ շի անում, նիլում ա ձին ու քշում:
Քշած վախտը տենում ա, որ առաջին մի լավ ամարաթ դուա էկավ
էլեթ: Գնաց տեհավ նրանից լավ ամարաթ, դու մի ասա՝ էտ էլ
Արջի ամարաթն ա: Գնաց առաջացավ տեհավ մի սիրուն ախչիկ
ակուշկին կաղնած է: Ախչիկը տեհավ ձիավորին, ասեց.— Կա-
չկա իմ ախպերը կըլի:

Թաքավորի տղեն մողացավ ամարաթին, տեհավ իրա միջնակ
քիրն ա, վեր էկավ, փաթաթվեցին իրար, ներս մտան, հաց կե-
րան, մի քիչ խոսեցին մութն ընկավ: Ասեց.— Ախպեր ջա՛ն, հմի
Արջը կը գա, քեղ կուտի, բա ես ո՞րդի պահեմ քեղ:— Տարավ դուան
տակը քեչի մեջ փաթաթեց պատի հետ տնկեց: Իրիկունը Արջը
էկավ տուն: էկավ տունը հաց կերավ, պրծավ, ասեց.— Կնի՛կ,
մարդ-մարդաֆոտ ա գալի ըստեղ:

Ասեց.— Քու տունը շինվի, հանդ ու շոլ գու ես ման գալի,
ըստեղ ո՞ւր ա մարդ:

Մի քիչ մնաց, տազ արեց, ասեց.— Կնիկ, արի մի խաբի,
մարդ-մարդահոտ ա գալի:

Ասեց.— Ի՞նչ անենք, բալքի ախպերտանցիցս մինը էկել ա:

Ասեց.— Մենձ ախպերդ գա՝ մենձ թիքեն անգաճը կը թողամ,
միջնակը գա՝ էլի էնպես, պուճուրը գա՝ իմ աչքի վրեն տեղ ունի:

Ասեց.— Պուճուր ախպերս էկել ա:

Ասեց.— Բե՛ր, ուտենք, խմենք, քեֆ անենք:

Գնաց քեչի միջիցը հանեց ախպորը, բերեց, Արջի հետ կե-
րան, խմեցին, էտ քշեր քեֆ արեցին:

Առավոտը լիսը բացվեց, բացվի ձեր վրեն, ասեց.— Զճուդ-խախամը Լեյլո ձիով իմ կնիկը տարել ա, պտի էթամ բերեմ:

Արջը ասեց.— էտ ի՛նչ բան ես արել, ոնչ գնա, ոնչ էլ, էթաս՝ ետ շես գա:

Թաքավորի տղեն անգաճ չարեց, ձին նիլավ ու քշեց: Քշեց, անցկացավ մի էրկու սհաթ, տեհավ մի դուղ տեղ, էտ ամարաթ-նեբրիցը լավ ամարաթ: Գնաց առաջացավ, տեհավ մի ախշիկ ակուշկուճը նստած ա: էտ ախշիկը որ էտ ձիավորին տեհավ, ասեց. «Կա-չկա էս իմ ախպերը կըլի»: Զիավորը մոտեցավ, տեսավ որ իրա քիրն ա: Վեր էկան փաթաթվեցին իրար: Գնացին տուն կերան, խման, տեսան որ մութն ընկավ, ասեց.— Ախպեր ջա՛ն, հմի Արծիվը կը գա քեղ կուտի, քեզ որդի պահեմ:

Տարավ դուան տակը քեշի մեջ փաթաթեց ու պատի հետ տընկեց:

Իրիկունը Արծիվը էկավ տուն: Հաց կերավ պրծավ ասեց.— Կնի՛կ, մարդ-մարդաֆոտ ա գալի:

Ասեց.— Հանդ ու շուր դու ես ման գալի, գալիս ես ինձնանից ես մարդ ուզո՞ւմ:

Շատ որ ասըմ ա, ասըմ ա.— Բալքի ախպորտանցիցս մինը էկել ա:

Ասըմ ա.— Թե մենձ ախպերդ գա՛ մենձ թիքեն անկաճը կը թողամ, թե միջնակը գա՛ էլ ընենց, պուճուրը դա՛ աչքիս վրա տեղ ունի:

Ասեց.— Պուճուր ախպերս էկել ա:

— Գնա ասա դա, ուտենք, խմենք քեֆ անենք:

Գնաց բերեց, կերան, խման, քեֆ արեցին:

Առավոտը լիսը բացվեց, բացվի մեզ ու ձեզ վրեն: Թաքավորի տղեն ասեց որ.— Պտի էթամ իմ կնիկը բերեմ, տարել ա Զճուդ-խախամը Լեյլո ձիով:

Ասեց.— Մի գնա, դա որ փեյտահ ա էկե՛ մեր կնանիքն էլ կը տանի: Անկաճ չարեց, ձին քշեց ու գնաց:

Քշեց գնաց, տեսավ մի ամարաթ, որ աշխարքի տակ չկա: Տեսավ իրա կնիկը նստած ա ակուշկեն: Ասեց.— Դե՛, վերարի փախնենք քանի չի էկել:

Կնիկը վեր էկավ, քաշեց ձիու թարքը ու քշեց: Քշեց. իրիգ-նապահին Զճուդ-խախամը սարերումը ավղուշ անելով էկավ տուն, տեսավ կնիկը շկա, ասեց.— Լեյլո, ուտենք, խմենք՝ էթանք, թե շուտենք, չխմենք՝ էթանք:

Լեյլոն ասեց.— Կեր, խմի, մի հանգ էլ քնի, նոր էթանք:

Ջհուդ-խախամը կերավ, խմավ, մի հանգ էլ քնեց, էլավ նիլավ ձին, քշելու բաշտան հասավ թաքավորի տղին: Ասեց.— Տղա՛, էս ի՞նչ ես արեւ:— Ասեց.— Գնա՛, էս մինը բախշում եմ քեզ, որ շխանը աչքիցս հանիր դրիր անկաճս. էլ չգաս հա՛:

Խլեց ախշկանը, տարավ տուն:

Տղեն ետ գառավ Արծվի տունը, Արծիվն ասեց.— Ախպե՛ր, արի դու էլ մի էթա:

Թագավորի տղեն ասեց.— Անպատճառ պտի էթամ, յա պտի ըսպանվեմ, յա պտի բերեմ:

Առավոտը շուտ քշերով վեր կացավ, ձին քշեց, քշեց, տեհավ կնիկը նստած ա, ասեց.— Թեղ.արա, վեր արի ըսօր էթանք, բալքի դրա հողիցը գնանք:

Ձին նիլան ու քշեցին: Քշեցին էկան գրա Արծվի տունը:

Ջհուդ-խախամը իրիզվան տուն էկավ, տեհավ չկա էլի վնիկը, ասեց.— Լեյլո շան, ուտենք, խմենք՝ հետտ էթա՞նք, թե չուտենք, չխմենք՝ էթանք:

Ասեց.— Կեր, խմիր, մի հանգ էլ քնիր՝ նոր էթանք:

Կերավ, Ջհուդ-խախամը, խմեց, մի հանգ էլ քնեց, վերկացավ նիլեց ձին, քշեց: Հոպ անելու բաշտան հասավ թաքավորի տղին:

Ասեց.— Թաքավորի տղա՛, չասեցի՛ մի գա, էս էլ բաշտում եմ ըտբան, որ ինձ աղատեցիր դուան տակից, էլ չգաս հա՛: Ծկել ես՝ էս անգամը կը սըպանեմ: Ասեց, վերցրեց ախշկանը ու ետ գառավ:

Թաքավորի տղեն գնաց Արծվի մոտ: Արծիվն ու քիրը շատ ասեցին՝ մի՛ եթա, էլի գնաց:

Դնաց վերցրեց կնգանը, փախավ:

Ջհուդ-խախամը իրիկունը էկավ ավի տեղից, տեսավ որ կնիկը չկա, ասեց.— Լեյլո ջան, ուտենք, խմենք՝ էթա՞նք, թե չուտենք, չխմենք՝ էթանք:

Ասեց.— Կեր, խմիր, էրկու հանգ էլ քնի, նոր էթանք:

Կերավ, խմավ Ջհուդ-խախամը, նիլեց ձին, քշելու բաշտան հասավ թաքավորի տղին:

Ասեց.— Ծս քեզ շասի՞ մի գա, որ էկել ես, էս հետ խնայել չկա: Դրեց թաքավորի տղին մի հատ տախտակի վրա, ոտերիցը մանդր բրթելով դուա էկավ գլուխը, լցրեց ձիու խորշինը, քցեց ձիու թամբի վրեն, ձիուն էլ մի դամշի տվեց, ասեց. «Դե գնա»:

Ջհուղ-խախամը էկավ իրա տունը, ձին թաքավորի տղին տա-
րավ Արծվի տունը: Քիրը տեհավ, որ ձին գալիս ա առանց մարթ.
էկավ, էկավ՝ տեհավ որ խուրչնի միշիցը արինը կաթում ա.—
Վա՛յ,— ասեց քիրը,— էս ի՞նչ բան ա:

Խուրչինը վեկալավ տեհավ, որ բուրբը դիմա-դիմա բրդած ա:
Արծիվը շուից էկավ տուն, ասեց.— Բա շես ասի, ախպորս բըր-
թել են:

Արծիվը կանչեց Արջին ու Գելին, էկան տեհան: Գելն ասեց.—
Ես որ շատ ոչխար եմ կերե, հաշեհաշ կշարեմ քոմմա շանդակը:

Արջն ասեց.— Ես ընենց ուժ ունեմ որ՝ կը հուպ տամ, կպկցնեմ
բուրբ իրար:

Արծիվն էլ ասեց.— Որ դուք էտ անեք, ես էլ անմահական
շուր կը բերեմ, կըտամ պնչին, կը լավանա:

Գելը իրա արածն արեց, Արջն էլ հուպ տվեց կպցրեց իրար,
Արծիվն էլ թռավ երկնքից անմահական շուր բերեց, տվեց պնչին՝
թաքավորի տղեն փռշտաց ու նստեց:— Օ՛ֆ,— ասեց,— ես ինչ
բուր քնել եմ:

Արծիվն ասեց.— Տունդ չքանդվի, քեզ ընենց են փռթե, որ
կտորներդ մի խորովածի թիքա էր: Գելը շարեց, Արջն էլ հուպ
տվեց կպցրեց իրար, ես էլ անմահական շուր բերեցի, որ լավա-
ցար:

Թաքավորի տղեն ասեց.— էլ շեմ կարա բերի, մնաց որ գնամ
դրա ձիու հունարը գտնեմ, որ բերեմ:

Ասեց.— Գնա՛, համա չերեա՛ս Ջհուղ-խախամին, հա՛:

Թաքավորի տղեն գնաց: Գնաց հասավ իրա կնկան: Կնիկը
տեհավ որ էլ ետ էկավ, ասեց.— Տունդ չքանդվի, էս հետ տեհել ա՛
քեզ շուրը կըքցի, էլ շես պրծնի:

Ասեց.— էս հետ էկել եմ, որ դու դրա ձիու հունարը իմանաս,
ինձ ասես:

Ասեց.— Ո՞նց իմանամ:

Ասեց.— Որ կը գա տունը, ասա՛ ես մենակ ո՞նց ապրեմ էս
վերվերի տեղումը, ո՞նչ մարթ կա, ո՞նչ իսան կա, ախր մի ձիուդ
հունարը ասա՛ բալքի ես դրանով միքիչ ապրեմ:

Ասեց.— Իմ ձիու հունարը քեզ շեմ ասի, դու կէրթաս ուրիշի
կասես:— Ա՛յ քու տունը շինվի, մի մարդ ունեի՝ սպանեցիր, էլ ով
ունեմ, որ ասեմ:

Տեհավ որ կնկա խաթրիցը չի կարա դուս գա, ասեց.— Թա-
քավորի ախչիկ. հմի,— ասեց,— էս իմ լելլո ձիու մոր ծնելու ժա-

մանակն ա, մնում ա քսան օր որ ծնի, համա նա ծովի մեջն ա, ծնելու վախտը դուրս ա գալի Սպիտակ սարը ու էնտեղ ծնում ա, համա ընտեղ մրջյուններ կան, ամեն մրջյունը մի թաղու բարա ա. էն ծնելու ժամանակը ուտում են քուռակին, ես ընդար ղոչաղ ի, որ պրծացրեցի, մի ոտը կերան, եթե ղոչաղ մարդ ըլի, կարենա չորսը ոտը պրծացնի, իմ Լեյլոյին կը հաղթի և ինձ էլ կըսպանի:

Թաքավորի ախչիկը ուրախացավ, լուսը բացվի ձեր վրեն ու մեր վրեն, Ջհուդ-խախամը գնաց ավղուշ: Թաքավորի տղեն էկավ իր կնդա կուշտը, ասեց.— Ի՞նչ արեցիր:

Ասեց.— Ա՛յ մարդ, իմացել եմ,— ասեց,— Լեյլոյի մերը մի հրեղեն ձի ա, ծովեղեն ա, քսան օր ա մնում, որ նա ծնի: Էն Սպիտակ սարը որ տենում ես, էն Սպիտակ սարի վրեն պտի դուս գա՝ ծնի: Համա մուղաթ կաց, ընդեղ մրջյուններ կան թաղու բարա են, որ կարենաս չորս ոտը սալամաթ պրծացնես էն քուռակին, Լեյլոյին կը հաղթի:

Թաքավորի տղեն ընկավ ճամփա ու գնաց: Գնաց հասավ էն Սպիտակ սարը, քսան օրը թամամեց, տեհավ որ ծովի միջից մի հրեղեն ձի դուս էկավ: Էկավ ետ սարի վրեն սկսեց որ ծնի՝ մըրջյունները մոտ էլան: Թաքավորի տղեն թուրը քաշեց, դրանք մոտ էկան՝ դա բրդեց, բրդեց՝ սաղ թափեց, ձին հենց ծնեց, քուռակը վերցրեց ու փախավ: Մրջյունները ինչքան ընկան քամակիցը, դա բրդեց: Չորս ոտն էլ սալամաթ բերեց: Բերեց Արծվի տունը: Արծիվը տեհավ, որ բերել ա Լեյլոյի ախպորը, ասեց.— Էս անգամ կը հաղթես:

Մնաց մի չորս ամիս, քուռակը օրեկան էր մենձանըմ: Չորս ամսից եղը Արծիվն ասեց.— Գնա՛, քու կնկանը էս հետ կբերես:

Թաքավորի տղեն նիլավ Լեյլոյի ախպորն ու քշեց: Քշեց գնաց իրա կնկա մոտը, նստան Ջհուդ-խախամի տունը, կերան, խման, քեֆ արեցին, եղնա նիլան ձին ու էկան:

Մնաց, իրիկվան Ջհուդ-խախամը ավից էկավ. էկավ տեհավ կնիկը չկա, ասեց.— Լեյլո՛, ուտենք, խմենք՝ էրթա՞նք, թե խմենք՝ էթանք:

Լեյլոն ասեց.— Ո՛չ կեր, ո՛չ խմի, ոչ էլ գնա, էտ տանողը իմ պուճուր ախպերն ա:

Ջհուդ-խախամը շոքերին տվեց, էլ ինչ աներ, նիլավ ձին քշեց: Դա քշեց, թաքավորի տղեն էլ տարավ կնիկը դրեց Արծվի տունը ու ետ գառավ Ջհուդ-խախամի առաջը: Քշեց էկավ վրեն.— Հա՛,— ասեց,— պատրաստ կաց:— Սուրը քաշեց Ջհուդ-խախամին տող-

րամ-տողրամ բրդեց: Արծվի տունը ծանրը՝ թողին, թեթևը՝ վեկալան ու գնացին Արջի տունը: Արջն էլ դրանց հետ ծանդրը՝ թողեց, թեթևը՝ վեկալան, գնացին Գելի տունը: Գելը տեհավ, որ իրա բաջանաղնեքը քոմա էկել են, իրա միրզամն էլ հետը, ըտեղ նստան, դաստախունը փռեցին: Հենց որ նստեցին հացի, Գելը, Արջը, Արծիվը խրխիքը հանեցին, ըլան ամենքը մի տասնուհինգ տարեկան տղա, ըտեղ կերան, խմեցին, քեֆ արեցին: Հետո ըտեղից ծանրը՝ թողին, թեթևը՝ վերցրին, էկան թաքավորի ամարաթը: Թաքավորը իմացավ, որ իրա տղեն, փեսեքը, ախչկեքը գալիս են՝ քելվաններ սարքեց, ղրկեց դրանց առաջը, գնացին վերկալան, բերին: Նորից օխտը օր, օխտը քշեր հարսանիք արին, կերան, խման, քեֆ արին:

Մնաց թաքավորի պուճուր տղեն, հորը մնաս բարով աքեց, գնաց իր անոր տունը: Անեքը երբ իմացավ, որ փեսեն գալիս ա իրա ախչկա հետ, քելվան սարքեց ղրկեց, փեսին բերին ախչկա հետ, նորից օխտը օր, օխտը քշեր հարսանիք արեց: Կերան, խման, քեֆ արեցին: Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին: Երկնքից իրեք խնձոր իջավ՝ մինը ասողին, մինը լսողին, մինն էլ անկաճ դնողին:

